ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-31/26-IS/IPSL

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 94 532 900 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,
2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,
2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,
2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 94 532 900 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	Կազմակերպություն
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	ՀՀ ԳԱԱ «Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հ/հ՝ 900011033033 ՀՎՀՀ՝ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 24/6, 5-6 հարկեր Հ/հ՝ 900018005497 ՀՎՀՀ՝ 02508174 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ (ստորագրություն) Կ. Տ. Կարեն Բորիսի Ղարիբյան	Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ (ստորագրություն) Կ. Տ. Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն) Օրդուխանյան Էմիլ Հրաչյայի

Հավելված N 1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-31/26-IS/IPSL պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-31/26-IS/IPSL պայմանագրի գնի վերաբերյալ՝ 94 532 900 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

_____ Կ. Տ.
(ստորագրություն)

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝

_____ Կ. Տ.
(ստորագրություն)

Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան

Հավելված N 2
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-31/26-IS/IPSL պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳԾ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	6
Այլ պարբերականում հրապարակում՝	35
Գրքեր, մենագրություններ՝	5
Գիտաժողովի նյութեր՝	20

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Նազարյան Հայկ Վոլոդյայի

Կ. Տ.

Հավելված N 3
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-31/26-IS/IPSL պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

<< դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝(ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	88 685 790	17 737 158	22 171 447	22 171 447	26 605 738
2.	տնտեսական ծախսեր՝	2 090 000	418 000	522 500	522 500	627 000
3.	այլ ծախսեր՝	3 757 110	751 422	939 277	939 277	1 127 134
Ընդամենը՝		94 532 900	18 906 580	23 633 224	23 633 224	28 359 872

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Հասմիկ Վլադիմիրի Գուլբանյան

Կ. Տ.

Հավելված N 3.1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-31/26-IS/IPSL պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

՝՝ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**2 090 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	400 000
2.	*գազի ծառայություն*	1 100 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	50 000
4.	*կապի ծառայություն*	500 000
5.	*աղբահանություն*	40 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**3 757 110**
1.	Գույք	300 000
2.	Սարքեր և սարքավորումներ	600 000
3.	Տնտեսական և գրենական պարագաներ	250 000
4.	Գիտական միջոցառումների կազմակերպում	300 000
5.	Հրատարակման ծախսեր	800 000
6.	Գործուղում	1 200 000
7.	Ներկայացուցչական ծախսեր	217 110
8.	Այլ ծախսեր	90 000

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Հասմիկ Վլադիմիրի Գուլքանյան

Կ. Տ.

Հավելված N 5
«29» դեկտեմբերի 2025թ.
N 1-31/26-15/IPSL պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:
2. **Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):**

2026 թվականի ՀՀ պետբյուջեից բազային ֆինանսավորման համար առաջադրված գիտական ծրագրի հիմնական նպատակն է շարունակել բազմակողմանի և համակարգված հետազոտությունները, ինչպես նաև գիտականորեն հիմնավորված վերլուծությամբ բացահայտել հայ հասարակության պատմական ու արդի հիմնախնդիրները փիլիսոփայական, սոցիալական, քաղաքական և իրավական համակարգերի զարգացման համատեքստում: Իրականացված գիտական ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել Հայաստանի Հանրապետության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթությունները համապատասխան ոլորտներում:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):**

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային ֆինանսավորմամբ ծրագրում ներկայացված նպատակներն ու խնդիրները 2026 թվականին իրականացվելու են ինստիտուտի գիտության համապատասխան ուղղություններով մասնագետների, ինչպես նաև ասպիրանտների և հայցորդների միջոցով: Ինստիտուտի որոշ գիտաշխատողներ ընդգրկված են ներպետական և միջազգային ծրագրերում, ինչպես նաև համագործակցում են ամերիկյան, եվրոպական և ԱՊՀ մի շարք երկրների գիտահետազոտական հաստատությունների հետ, յուրաքանչյուր տարի մասնակցում են բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների, քննարկումների, կլոր սեղանների, հանդես են գալիս դասախոսություններով արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հատկանշական է, որ ծրագրի լիարժեք և ամբողջական իրականացմանը նպաստում են ինչպես՝ ներպետական, այնպես էլ միջազգային կապերի ամրապնդումը և ընդլայնումը: Ինստիտուտը սերտ համագործակցում է պետական մի շարք կառույցների, բուհերի հետ (այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, Երևանի պետական համալսարան, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան, Հայ-ռուսական համալսարան, ՀՀ Սահմանադրական դատարան, ինչպես նաև միջազգային տարբեր (ԱՄՆ, Ֆրանսիա, ՌԴ, Լեհաստան, Գերմանիա և այլ երկրներ) համալսարանների, գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների մասնագետների հետ:

4. **Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում հետազոտություններն իրականացվում են չորս գիտական ուղղություններով՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն:

Փիլիսոփայության տեսության և պատմության բնագավառում 2026 թվականին նախատեսվում է շարունակել ուսումնասիրությունները՝ նվիրված տեսական փիլիսոփայության և մեթոդաբանության հայեցակարգերում ազգային ինքնության հիմնահարցի փիլիսոփայական ասպեկտների վերլուծությանը: Արվեստի տեսության և գեղագիտության շրջանակներում շարունակվելու են մշակութային՝ ի դեմս գեղարվեստական արժեքների և դրանց յուրահատկությունների բացահայտմանն ուղղված աշխատանքները:

Իրականացվող հետազոտությունների արդյունքները ներկայացվելու են տեղական և միջազգային գիտական պարբերականներում տպագրված հոդվածների տեսքով:

Սոցիոլոգիայի բնագավառում 2026 թվականին նախատեսվում է շարունակել հետազոտությունները՝ նվիրված ՀՀ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական իրավիճակին, ինչպես նաև միգրացիոն գործընթացների ազդեցությանը:

Իրականացվող հետազոտությունների արդյունքները ներկայացվելու են տեղական և միջազգային գիտական պարբերականներում տպագրված հոդվածների տեսքով:

Քաղաքագիտական ուսումնասիրությունների բնագավառում 2026 թվականին շարունակվելու են գիտական հետազոտությունները՝ նվիրված հարավկովկասյան տարածաշրջանում ձևավորված նոր երկրառազմավարական իրավիճակին և իրողություններին: Տարածաշրջանային անվտանգության և խաղաղության հաստատման հարցում առանձնակի կարևորվելու է «խաղաղության խաչմերուկ» նախագծի ազդեցությունների ուսումնասիրությունը: Հաշվի առնելով արդի աշխարհաքաղաքական գործընթացները, դրանց զարգացման միտումները, ինչպես նաև ՀՀ առջև ծառացած մարտահրավերները՝ տարվելու են ուսումնասիրություններ ՀՀ արտաքին քաղաքականության հավասարակշռման և հաշվեկշռման ուղղությամբ:

Կատարված հետազոտությունների արդյունքները ներկայացվելու են տպագրության տեղական և արտասահմանյան գիտական պարբերականներում, ինչպես նաև ներկայացվելու են շահագրգիռ պետական կառույցներին:

Պետաիրավական ուսումնասիրությունների բնագավառում 2026 թվականին շարունակվելու են գիտահետազոտական և գիտագործնական ուսումնասիրությունները՝ նվիրված հայ իրավունքի աղբյուրներին, արդի պետության և իրավունքի տեսությանը և պատմությանը, ՀՀ-ում սահմանադրաիրավական և դատաիրավական բարեփոխումներին, պետական և օրենսդրական համակարգերի կատարելագործմանը, արդի սահմանադրական իրավունքի առանցքային հիմնախնդիրներին:

Կատարված հետազոտությունների արդյունքները ներկայացվելու են տպագրության տեղական և արտասահմանյան գիտական պարբերականներում:

Իրավունքի միջազգայնացման և իրավահամեմատական ուսումնասիրությունների համատեքստում շարունակվելու են ուսումնասիրությունները՝ նվիրված իրավունքի միջազգայնացման հիմնախնդիրներին, բնապահպանական խնդիրների իրավական կարգավորման մեխանիզմների մշակմանը, ինչպես նաև ինքնիշխանության հիմնախնդիրներին:

Կատարված հետազոտությունների արդյունքները ներկայացվելու են տպագրության տեղական և արտասահմանյան գիտական պարբերականներում, ինչպես նաև ներկայացվելու են շահագրգիռ պետական կառույցներին:

Քաղաքական մշակույթի, ժողովրդավարացման և եվրաինտեգրման ուսումնասիրությունների գիտական խումբը 2026 թվականին շարունակելու է հետազոտությունները՝ նվիրված ԵՄ ինտեգրման, քաղաքական մշակույթի, քաղաքական վարչակարգերի և քաղաքական խոսույթի դրսևորման հիմնախնդիրներին տարածաշրջանում և

ՀՀ ժողովրդավարական անցման համատեքստում: Հետազոտվելու են նաև TRIPP-ը և տարածաշրջանային գեոէկոնոմիկան հաղորդուղիների ապաշրջափակման համատեքստում:

Կատարված հետազոտությունների արդյունքները ներկայացվելու են տպագրության տեղական և արտասահմանյան գիտական պարբերականներում, ինչպես նաև ներկայացվելու են շահագրգիռ պետական կառույցներին:

5. Ակնկալվող արդյունքները:

2026 թվականին «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» բազային ֆինանսավորմամբ ծրագրի իրականացմամբ ստացված արդյունքները ներկայացվելու են մենագրությունների, ժողովածուների, ինչպես նաև տեղական և արտասահմանյան գիտական ամսագրերում (այդ թվում՝ Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում) գիտական հոդվածների տեսքով: Իրականացվելու է գիտաուսումնական գործունեություն ասպիրանտների և հայցորդների պատրաստման ուղղությամբ: Շարունակվելու է ինստիտուտի գիտական արդյունքների հանրայնացման աշխատանքը տեսաբանախոսությունների նկարահանման և ինստիտուտի սոցիալական հարթակներում դրանց հանրայնացման միջոցով: Նախատեսվում է կազմակերպել ինչպես՝ հանրապետական, այնպես էլ միջազգային գիտաժողովներ, մասնակցել տեղական և միջազգային գիտական միջոցառումներին, ներկայացնել գիտահանրամատչելի հրապարակումներ մեդիայում:

Շարունակվելու են աշխատանքներն ինստիտուտի՝ "The Politnomos: Journal of Political and Legal Studies" գիտական հանդեսը Scopus միջազգային գիտաչափական շտեմարանում ընդգրկելու ուղղությամբ:

Կազմակերպության տնօրեն՝ _____ Էմիլ Օրդուխանյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Էմիլ Օրդուխանյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 6
«29» դեկտեմբերի 2025թ.
N 1-31/26-IS/IPSL պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
	Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)	Հայաստանի Հանրապետությունում սոցիալական, քաղաքական, իրավական հիմնախնդիրների և գործընթացների վերլուծություն: Առաջնային ուղղություններ՝ Փիլիսոփայության տեսության և պատմության հիմնախնդիրներ, հայ իրավաքաղաքական մտքի ուսումնասիրություն և վերլուծություն, սահմանադրական իրավունքի և իրավունքի միջազգայնացման, իրավական պետության կայացման հիմնախնդիրների ուսումնասիրություն, ժողովրդավարացման, քաղաքական վարչակարգերի և մշակույթի, TRIPP և տարածաշրջանային նոր գեոէկոնոմիկայի հիմնախնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն հաղորդուղիների ապաշրջափակման համատեքստում, միգրացիայի և ժողովրդագրության հիմնախնդիրների ուսումնասիրություն:	1. Գիտատեսական և գիտագործնական վերլուծությունների իրականացում:	1-4 եռամսյակ
			2. Գիտաուսումնական գործունեություն, երիտասարդ գիտական կադրերի պատրաստում:	1-4 եռամսյակ
			3. Կիրառական հետազոտությունների իրականացում:	2-4 եռամսյակ
			4. Գիտաժողովների (տեղական և միջազգային) մասնակցություն, գիտական միջոցառումների կազմակերպում:	2-4 եռամսյակ
			5. Scopus գիտաչափական շտեմարանում ընդգրկման ներկայացված The Politnomos. Journal of Political and Legal Studies գիտական հանդեսի աշխատանքների շարունակություն և տպագրություն	1-4 եռամսյակ

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Զոհրաբ Օրբելյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Զոհրաբ Օրբելյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*